

Գ Լ ՈՒ Խ Ա .

Պատմութիւնն Պոռքովիւնայի արեւելեան Հայոց :

Հայք շատ կանուխ ժամանակաւ հաստատուած են այսօրեան Աւստրիական կայսրութեան երկիրներն, եւ ի մասնաւորի ի Լեհաստան :

Յամին 1062 Ռուսիոյ Իզասլաւ (Izaslaw) իշխանին հրաւիրանօքն՝ 20.000 Հայք Անի քաղաքէն եկան ի Ռուսիա՝ կոռելլու ընդդէմ՝ Բուլղղիացոց (Polowzer, որ են՝ Rumanen = Romanen), եւ ետ չդարձան ի Հայս, այլ հաստատուեցան ի Քիէվ եւ յետոյ Բոտոլսքի-կամենիցի մէջ¹, եւ ասկէ սիռեցան գրեթէ բովանդակ այն երկրին վրայ :

Յամին 1280 Լեւոն Տանիլովիչ իշխանն կոչեց Հայերն, որ գան եւ իւր 1270ին հիմնարկած Լեմպերկ քաղաքը բնակին² : Հայք այս տեղ սեպհական վարչութեան³ (magistrat) մը տակ էին, եւ այնչափ շատ՝ որ Գասիմիր Գ. Մեծն († 5 Նոյ. 1370³) յամին 1367 իրենց եր-

* Արդէն ասկէ յտուջ Հայք ըստ մասին կը բնակէին Լեմպերկի մէջ ըստ Ստեփ. Ռոշքայ (Ժամանակագրութիւն, ամ 1277,) որ կ'ըսէ. "Յայտ՝ ամի Հայք բնակէին ի Լեօպուիս, եւ էր վանքն անդէն Սր. Աննայի. զի գտանի ի նմին Եկեղեցոյ՝ զերեզմանաբար գտնալ Թվ. 2րդ, որ է Բրիտտոսի 1277:,, Ժ. Թ.